



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Կիրակի, 9 Յունուարի առաւօտեան, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Լաս Վեկասի Ս. Կարապետ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Հօր եւ թեմիս կրօնական ժողովի խնդրանքին, Աւագութեան պատիւ եւ տիտղոս շնորհեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեանին, առ ի գնահատանք Հարաւային Ամերիկայի Արժանթինի եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմերուն մէջ իր երկարամեայ ծառայութեան՝ ի սպաս Հայց. Առաք. Ս. եկեղեցւոյ եւ մեր պատուական ժողովուրդին:

Այս առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ մատուցեց, աւագութեան պատիւ շնորհեց, օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը փոխանցեց եւ ջրօրհնէքի արարողութիւնը կատարեց: Ս. Խորանին սպասարկեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեան:

Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ ՀՕՄ-ի «Շուշի» Մասնաճիւղին կազմակերպած սիրոյ սեղանին, կատարեց սեղաններու օրհնութիւնը եւ փոխանցեց իր քաջալերանքի խօսքը: Գեղարուեստական յայտագիրի բաժինով ՀՕՄ-ի շաբաթօրեայ վարժարանի աշակերտները ելոյթ ունեցան երգերով եւ արտասանութիւններով:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիպում մը ունեցաւ շրջանի Ս. Կարապետ եկեղեցւոյ ծխական յանձնախումբին հետ, որուն հետ քննարկեց եկեղեցւոյ շինարարական աշխատանքներու ընթացքը:

**PRELATE VISITS THE LAS VEGAS PARISH COMMUNITY ON THE  
OCCASION OF THE NEW YEAR AND THE FEAST OF THE  
NATIVITY AND THEOPHANY OF OUR LORD**

On Sunday, January 9<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Las Vegas parish to celebrate the Nativity and Theophany of our Lord Jesus Christ with the St. Garabed Church parish community.

The Prelate celebrated Divine Liturgy, delivered the sermon, and conducted the blessing of water on this occasion. Parish Pastor Rev. Fr. Avedis Torossian assisted at the altar.

By the request of the Prelate and the Religious Council, H.H. Catholicos Aram I honored Fr. Avedis with the title of Archpriest for his years-long service to the Armenian Church. Thus, during the Liturgy, the Prelate read the Pontifical Encyclical bestowing upon Fr. Avedis the title of Archpriest.

Following the service, the Prelate attended a Christmas luncheon organized by the ARS "Shoushi" Chapter.

Later in the day, the Prelate met with the St. Garabed Church Parish Council to discuss the progress of the construction project.